ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

23.03.2022 18:13

Ուսանող իրավաբաններ հյուրընկալելու ավանդույթը Փաստաբանների պալատում շարունակվում է:

2022 թվականի մարտի 20-ին Փաստաբանների պալատ են այցելել ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի անդամներ:

Ուսանողներին ողջունել է Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը և ներկայացրել փաստաբանի դերն՝ արդարադատության համակարգում, Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական դպրոցի գործառույթներն ու առանձնահատկությունները:

Ուսանողներին հետաքրքրող հարցերը բազմաթիվ էին՝ Փաստաբանական դպրոց ընդունվելու կարգից մինչև ուսումնական գործընթաց, դասավանդման մեթոդներ, ինչպես նաև գործնականում փաստաբանական գործունեության հոգեբանական բարդություններ, մասնագիտական պաշտպանվածություն և այլն:

Փաստաբանների պալատի նախագահի տեղակալը պատասխանել է այցելուներին հետաքրքրող բոլոր հարցերին:

Ունկնդիրները Փաստաբանների պալատում հյուրընկալվել էին առաջին անգամ և նրանց հնարավորություն է ընձեռնվել նաև շրջել շենքի վարչական տարածքում և անմիջականորեն ծանոթանալ աշխատանքային գործընթացներին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })